


14952

Կարծիր փառարի
Երջմարկո



1925

ՊՐԻՆՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋՑԵՐ

(82)

ՇԱԻ-ԲՈՆ

Կ Ա Ր Մ Ի Ր

= Բ Ա Ղ Ա Բ Ի =

ՇՐՋՄՈՒԼԻԿԸ

2000

91.99
-29

19 ~~ԹԻՖԼԻՍ~~ 25

1.99

29

ՊՐԻՆՏՈՒՄԵՐ ԵՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋՅԵՐ


ՃԱԻ-ԲՈՆ

ԿԱՐՄԻՐ ՔԱՂԱՔԻ

== ՇՐՋՍՈՒԼԻԿՐ ==

Պ Ո Ե Մ

19 Թ Ի Ֆ Լ Ի Ս 25



3269

509-405

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՏՆՈՒՄ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՏՆՈՒՄ

ՄԱՐԿԱ

Главлит № 749

Тифлис.

Тираж 1000

Քիֆլիս, Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. Տր. 4-րդ ապ., Պաշկին. փ. № 3

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԿԱԿԱՆ ՏՆՈՒՄ



W. B. King



Հ. Բ. Գ. Բ.

Ն Ա Ն Ե Ր Գ Ա Ն Բ

Յեա շրջմովիկ էյի...

Սիրաս միայն չը դնեցիր—
կապիտալ!

Շրջմովիկը՝

թափառող է.—

դարեր գիտի:

Գիտեմ թե յերբ ես ծնվել՝

հէյ.—

գիտեմ փեշակտ ինչ է—

— դնել!

— չարչարել!

— խնդալ!

Այ

Քիթ

քեզ! —

դժվար կը հաղթես մի

այսորվա պոետի:

Խոսքս, գնված

պոետի մասին է՝

վորոնք արհեստս

ուսեն.

խոսքս են է—

վոր դու ել «յերգիչ» ուսես՝

բանաստեղծ, —

բըմբլապոետ

յերգող. —

Վոր քո բալիշի,

կնոջդ դռնի յերգը գիտեն:

Համեմատիր խլեզը—

իմ Նաիրյան Մասիսին:

Ապա!

Ո՞ւր ձեր պոետը փնթի,

և ո՞ւր Շախ-Բոնը կողեկալով—

Յես!

Ս Կ Ի Ջ Բ

Արևելյան

են իրանցու, թեթև հնչող

մի բայաթի՝

իմ Նաիրյան տիտաններին

յերգը խրոխտ ու

հաղթական, —

կապույտ բլուզ ամբոխները

համաշխարհյան իրենց յերթին —

բերում եմ յես,

ձեզ եմ տալու —

իմ հոգուս մեջ

ինչքան վոր կան:

Յես, անձանոթ մի հաղթ պոետ,

յես թափառող մի շրջմուլիկ—

հիմի գեմիս հաղարներին

գիգանտաթիռ պատմության հետ,—

կուգեմ համեստ յերգս բերել՝

վորպես ջահել—

արևայերգ մի

բոլշիկ!

Իմ յերգերում մի մեծ քրքիշ.—

այսորվանից

իմ աչքերում մի հաղթ կրակ

բեզուլինի.—

խորհուրդների կարմիր կապույց

հորիզոնից —

ձեզ կը բերեմ մեր լույսերը,

մեր հույսերը—

Հոկտեմբերյան Իլիշի!

Ի. ԿԱՊԻՏԱԼ—ԱՄԵՆ ԻՆՉ՝

ՎՈՉԻՆՉ—ԱՎԱՐԱ

1.

Պատմական աշուն...

Լեզենդը են անցավ! —

Յերբ դու—Մասնավոր-Սեփական՝

խաղում եյիր վորպես մարդ

ժամանակի՝

վորպես դերասան!:

Հեծած կապիտալ կրիային—

գանդաղ՝

բայց հաղարախայթ

վորպես շուն —

կանցնեցիր՝
 վոր համաշխարհան
 կռիվներ ծագին. —
 դանդաղ կանցնեիր, այո,
 վոր քեզ, վորպես
 Մարգարէն —

հասկանար
 մի վերջին «հանքեցի» հասան...

* * *

Իմ քաղաքիս փողոցները —
 լսեցին,
 տեսան.

տեսավ իմ յերկիր Նաիրին՝
 վոր ապրում էյիր վորպես հրեշ,
 Ինձ մոտ Հոկտեմբեր յեղավ.
 Հոկտեմբերը՝ բերին
 մի

Հագո,
 Իվան —

Իրենց մագոլված ուսերին՝
 Վրիցդ կապեցին կամքը իրանց՝
 կոտցար!
 Մոսկովյան յերկրում
 հիմա դարձած ես
 մի հայկան! —
 ԵՇ!!!

Գործարանից —
 մագուլթոս ամբոխը

պլեանց քո ծնկները փթած.
 դողացիր!:

Փարիզում,
 Սուդանում,
 նրանք կամբը իրենց գրին քո գեւ —
 խոսեցին. —

— «Տուր վարձը մեր լրիվ,
 ու մի գողանար վամպիր!»:
 Այ, դու վոր ապրում ես՝
 ծծել ես Արժեքը-Հավելյալ:
 Նստել ես արյունակերտ պալատում,
 խմում ես արյունշաղ շամպանյն.
 զնում ես՝ —

գինի,
 կին
 պոռնիկ...

Փափուկ,
 անվիզ խողեր
 դարպասիդ ներսը. —
 մեկ ե,

անկողինդ կամ՝
 ազատ բակը լինի —

կը շփես բուկ՝ը,
 ու

ծիծեռ...

Ի՞նչ կա. —

գիտես վոր քո դռան՝
 մանեթով — ծառաներ ունես
 կաշառած. —

գիշերապահը,
городовой,
ու գլորնիկը—
ջահել,
ծեր!

2.

Ե՛յ!
դուք, վոր սրեր
ու ժամեր եք խլել.—
դուք—
վոր խեղկատակի նման
խաղացել եք անցողիկ
կոմեդիան,
հիմա խոսում եք—
մամուլից
մամուլ արձագանք՝
— վոր աչքերին ձեր
մի տեղ եմ մեխել!
Տե՛ղ՝
պոյեման իմ—
Շաիր-Բոնիր—
վոր՝
հազար ու հազար
բախտերի
ուժով եմ նետում,
նրանց՝—
վորոնք յերեկից
նոր աշխարհ,
նոր մարդ են կերակրել—

— ու փրկումը ձեր, տեսնո՞ւ!
Ահա՛

առ!

բերում եմ, ու պիտի տամ
քեզ,

պիտի տամ

ամեն մի խոսքս—

կծու կոմպլիմենտ՝

ճաղը, կատակ,

Դու—

կապիտալ—բուրժույ,

համաշխարհային բիրթելի—

կը տեսնես

քո

սարկավազից

մինչ

պատը հոռմի—

Իջած արխիվյան մի կրկես՝

վորպես միմոսներ

խեղկատակ!!!

Նաիրյան պոետս՝

կը յերգեմ

քեզ,—

— կը հերքեմ ինչպես հարկին և
պատմական անցյալին.

Իմ յերկիրը կը նայի—

յես Նաիրից կը թքեմ

յերբ գրկես— շոյելու...

Ահա՛ իմ նվերը

չքեղ,
պանծալին!!!
Քո փախած ճամփադ —
թագստոցդ ուզում եմ ծաղրել.
ուզում եմ

ձեռ. թաքունի
վերջին անկյունը
հիմար —
մի թեթե ժըպիտով հայհոյել,
այսինքն դադել.
ուզում եմ

մտածել մի պահ —
ԲԱՐ —

ԴԱԿ
անվանելու համար:
Ի՞նչ —
մի՞թե Փարիզում
չը կա մի ուարժի
Հանս —
կամ՝

Լոնդոնում,
Տիբեթում
Փան,

ու Միերգինչ. —
մի՞թե ինչպես Նաիրի
չը պիտի կարմրես,
դասակարգային կռվում —

ՏՆՔՍՍ!
Մի՞թե —

առիթներից հետո,
չես դառնալու

չիք. —
այսինքն Մեռած.
այսինքն

վոչինչ!!!
Ահա, թե ինչու
իմ յերգս բերում եմ յես, —
ու բերում

վորպես կանչ —
վոր կարմիր պոետիս
միլյոնիկոփ
կոլեկտիվ սրտից ե բղխել. —
Ահա թե ինչու —

պիտի
ահագանգ
ու մահ գուժի,
վորպես պատճե —
ԿԱՐՄԻՐ ԴԻԿՏԱՏՈՒՐԱ!

Դեռ Շաի-Բոնը կը լսի
անեծքը ձեռ

խեղկատակ —
հայհոյանքն ու հաչը.
Մոսկովը գիտի թե ձեզ
ինչպես ե պետք
կախել —

վորպես մի փոքրիկ
բրթոտ շընիկին!:

Մոսկովը հասկանում է քաջ.

Մոսկովը միշտ մահ կը գուժի—

վոր զու լակոսի նման
լսես—

—Sic

Служил!!!

3.

Ձեր թարուհը —

վորին հիմա, իմ Նաիրի յերկրում
յերգում են վորպես ժամանացի

կուպլետ՝

«Անտի Սավեստի» բլոկ, —

վորին մենք ասում ենք լորդ,
այսինքն

միլյոնչի կամ վոսկեծալ ատլետ,

բուրժույ. —

մեկին դուբերնատոր,

արքա վիլհելմ,

царь-ը Նիկոլան,

Մուսոլինին ֆաշիստ. —

հետո միտրոպոլիտը,

պապը,

վերջին քահանան):

— Բոլորը,

բոլորը սրանց,

ծաղրում են իմ Նաիրյան յերկրից—

մի բառակ լինի,

կամ

մեկ կարմիր մաշինիստ):

Բոլորի թոքում—

պրոլետարը իր արյունն է սրսկել—

բոլորը խմել են պուր-պուր կարմիր գինին.

բոլորը նրանք—

դարձել են թալանչի,

մարդասպան,

վորոնց թերևս պետք է

հսկա մուրճերով հսկել—

վոր ել չը գնեն

իրենց արյունը, չը տան

մի կնգա,

Ղարաչուն—

սարկավազը չողախ՝

կամ մեծատան սպան:

Թերևս գուքվի—

չըջմուլիկիս քաղաքը այս որեն. —

վոր կաֆե-շանտանը

դառնա

կենտգործ կոմ! —

վոր վերջին կիները փողոցի,

քաղզրագիտություն սովորեն...

կինը, թող


իր մուսկուլը

վաճառի

ֆաբ-գավին,—

և վոչ յերեկվա նման,

մարմին



ու

հողին —

տա մի ինտելիգենտ

ավարի:

4.

Հիշում եմ —

յերբ իջնում եին նրանք

(լորդերը),

բալետ-ոպերա, —

լայնաբերան կանանց հետ՝

ճիվաղի:

Բա —

լետը ցինիկ —

այսինքն՝ սրունք

կանանց

այսինքն՝ գեղարվեստ՝

նայում եին...

Վոր սրտները չը նվաղի —

լոժայում (նույնիսկ)

չփում եին կոներերը

կնոջ

վորպես ՍՐԻԿԱՆ —

տակից գեյրայի՝

վողջ գիշերը, յերեկույթին ամբողջ...

Լորդ! —

ճանաչում եմ քեզ.

«հանճարները»

վաղուց յերգել են

վաճառ քո հողին.

յես թողնում եմ

քո հիվանդ

կաշին —

հողիտ...

Շրջմուկը լավ գիտե —

— 1001 ընցեպտ ե

քո հագին.

այդ գիտի վերջին անկյունը,

(կ) գի

նե

վաճառ

ԴՈՒԽԱՆՁԻԿԻ:

Ոպերա — դուխան.

ինչ կասեք.

սաղում ե հե՛ —

— «Աշխարհի տեր»,

մի խելագար ավարի!

Ձեզ տեսել եմ կաֆե-շանտանում —

յերբ շրջմուկ եյի թափառող՝

գոներին.

վոր սիգարներ եիք ծխում,

ծախում եիք վոսկի՝

ու կրները. —

նորից կրներ եիք տանում

հարկերը հով հանգիստ՝

վերին:

Այդպես, մեծից մինչ փոքրը — քահանան —

սարքում եյին մեկ մեկ խրախճանք,
փակում եյին դռները

իմ վրան,

փակում և բոլորի վրա.—

Նրանց՝ վորոնց արյունն

ու

քրախնքն եք ծծում —
Նրանց՝ վորոնց ուղեղն

ու

սրաերն եք կրծում:
Նրանց համար եր փակ—
վորոնք ձեր սեղանն եին

զարդարել:

վորոնք մաշել եին թխները՝
մուսկուլը հալել

որեցոր,

ամիս ու ամիս միալար—

վոր հրավիրեն ձեզ՝

— թավալել արյան

պարում:

Այգալես եր և իմ սիրուն Նայիրում.—

այգալես եր, բոլոր իմ թափառած

բաղաճները յերեկվա!...

Սակայն P. K. II.-են չուղեց

Նայիրի յերկիրը՝

ու

պոետը իր—

կրունկիդ տակ նվա—

... յեվ ինձ մոտ Հոկտեմբեր յեղավ!...

* * *

Աշխարհների թալանը—

ու խրախճանքները ձեր—

բիրժեզիկ,

Լոնդոնի, Փարիզի

շուկաներում քիչ ե.

Նյու-Յորկի, Ստամբուլի

կաֆեներում քիչ են.—

դու, վերջին իմ յերկիր

Նայիրից՝ —

ուղեցիր վոսկի բամբակ—

իմ ախպերը, Համոն՝

քո հետեից վազի

շան պես!

Հիմա, շրջմուլիկի յերգում,

պիտի հուժկու մի աղմուկ

լինի.

իմ կոկորդում ահեղ՝

մրրիկե կանչ,

վոր Լենինյան մեր որերից

կարմիր մի համբույր առնի—

կրունկիդ տակ հեծող

կենդանի Մեքենան!...

Սպառնա քեզ!

Վոր դու արձակես շան նման

մի կլանչ —

յերբ կարմիր նիզակով

քո փորը խառնի!

Հիմա —

սիրելի ընթերցող,

իմ առդերում՝ ամօթ ու յերկուդ կա:

Իմ յերգը՝ կը գատի

եաիկան պրոլետարի...

Յեա, անամօթի յերգը

յերգեմ,

իսկ դո՛ւ, ինձ հետ միասին՝

հազարի հետ մեկ տեղ —

յեղիւր զիտակից վկա...

Իմացիւր, պիտի յերգեմ

բլոկը

պապի, ցարի՝

ու բուրժուական թաքունը —

— ավարաների!

II. ԿԱՊԻՏԱԼ — ԹԱԲՈՒՆ

ՈՒ ՇԱԽ-ԲՈՆՅԱՆ ՄԵՆԱՄԱՐՏ

5.

Յերկրագնդի կողմերին

բոլոր —

վորոնք պատալով են՝

Հոկտեմբեր են կառուցում,

տալիս եմ իմ յերգը

չնչին,

բերում եմ պոետս շրջովիկ:

Յերբ երեկ միայն՝ հուսիսյան

լորդերի փողոցում —

Հոկտեմբերը

զալիքից յելալ,

ապրեց —

ուզեց բոլոր կողմերը՝

արձագանքեն իր կանչին:

Ուզեց Մոսկովի

Ա. Կ. - ան —

Նյու-Յորքից,

Լոնդոնից,

ու

Հոմից յեկած

մուրճակիր տիտաններին —

ընդունել զրկաբաց:

Ու հիմա յերկիրը մեր

Սոցիալիստական՝

սպասում է ձեզ, —

Լոնդոնցի, Սուդանցի —

ձեզ ամենիտ!...

Ձեզ, վոր դարեդար են տանջել —

— կարմրե՛ք

զըրնդուն

զարթոնքում. —

բունուծյան կապիտալը՝

կլուծաների բլոկը վոր կան —

պետք է ջնջել!

6.

Ուզում եմ շրջմովիկյան
 իմ սրտաբուխ պոեմով—
 բացեմ
 կարմիր ըմբռնամարտ տիտանի:
 Ուզում եմ վերջին յերկտողս
 լսե՛ք.—
 պրոլետարական գրիչն իմ՝
 ձեզ մի ռոմանս՝ յերգե—
 ու արենա տանի:
 Արենան—

վոր կար յերեկ
 ուր
 անուշա շփոթ եր միայն.
 ուր կապիտալը
 «Չեմայոնադ»՝
 շրջմովիկիս քաղաքում,
 համ
 արյուն եր ծծում—
 համ ել լիմոնադ!...

7.

Իմ այսորվա որերում—
 չկա յերկմտանք
 ու
 հույզ...
 Յեկեկ իմ վորպես—Դո՛ւ:
 Սակայն—
 իմ այսորվա գրքում

չեմ յերգում «Չարը Հարուդ»,
 և վոչ
 «Չանգը Չրասույդ»՝—
 խոսում եմ նշտարի
 նման.—

— եսքիզ՝
 անաշխատ մի մարդու...
 Գրում եմ իմ միլյոնների սրտից.
 յես ել թող լինեմ
 խոսող—
 մի բանաստեղծ Շաի-Բոն.
 կյանքը ուսիս տանեմ—
 իբրեւ մեկը
 հաղարի—
 վոր իմ ուժից ճնշվես,
 ընկնես գետին՝
 թավալելու ընդ միշտ
 փորսոց,—
 վոր պատմական զայրույթն
 ու
 վրեժս հանեմ!

8.

Կապիտալ !—
 յես տեսա.
 երեկ մեռար իմ յերկրում:
 Նաիրու,—
 թափառծա քաղաքներից
 յեկա,

ինձ հետ հազարը
յեկավ.—

բղիւնց —

Ռուսի, Չինացու,

արաբի —

ու Նաիրեցի պոետի

Մասիսյան կրճառից —

բոցը Հոկտեմբերի!

Ապա

աբձաղանքեց,

ու աշխարհից աշխարհ ընկավ.

ընկավ

վոր բոլոր

դան —

վոր քանդէն,

— բանդէն քեզ

կապիտալ!

Վոր կինն ու գինին ըմպելիս

չըսկսես ԽՆԴԱԼ —

ու միաս

հոգեվարդիդ ճամպեքին!

Մահագույժը յեզով.

ու քեզ թաղեցին. —

թխեցին

ապտակը դեմքիդ...

Նաիրցին՝

Իվանը կարմիր՝

դիկտատուրան իրանց

վորպես մահացու մի թնւյն —

սղմեցին

գիրացած քթիդ.

ճգմկեց քո լակոտը՝ — բուրժույ —

սատկեց իր հեծած

կրյան!

* * *

Յեւ պայպե՛ս.

ուզում ենք զարկել

ձեր ժամը —

համաշխարհայն մտքով:...

Լիզում եք հիմի

վերքը՝ դրած ձեր սրտին.

զուք ել լավ գիտեք

մեռնելու եք իմ տիտաների

կամքով —

սակայն՝

քծնում ե՛ք —

լրբաբար գալարվում վերստին:

9.

Ի՜նչ!

կարծում եք միայն

այ՞դ ե պատմական ձեր ժամը վերջին:

Կապիտալ!

Հէ՛ս կասկածում միթե —

Հէ՛ս կարծում՝

վոր C. C. C. P.-ը պիտի աղմկի —

Թակի քո ականջին

իբրե լողունդ —

— Վոր յես գալու եմ

իմ շրջմովիկյան պոեմով.

— վոր համաշխարհային

ԴԵՄՈՆՍՏՐՈՅՅՈՒՆ ԿԸ լինի!...

Ո՛ր, ինչպես դու մահամերձ

պիտի ընկնես

ծունկեծունկ մեռնելու —

միլյոն ամբոխի դեմ!...

Կարմիր կոմունիզմի

ուրուականը —

ձեր

աչքերին իջած՝

դասակարգային կարմիր

աստվածներից ե պատմության.

— Լենինից — Նոկոմերեր գրկած —

ու Մարքսից՝

նախնեցի փիլիսոփան:

Միթե չը գիտես կապիտալ —

յուրաքանչյուր քարտաշ

կըզնի յերակը —

կամբը իր հակայական:

Կապիտալ՝

դու կաս — սատանան տանի.

պապի որհնությամբ գուցե՝

շոշափվող ես.

պապը՝

պուճուր աստված ե կնքել

քեզ!...

Մըի,

մաշինի մարդը —

քարի, ու

գազավառ հանքերի

պոեմա շրջմովիկ՝ —

— անաստված ենք!...

Գուցե դրա համար

մեզ զրկեցին,

լքեցին...

Ա՛յ, աստծով մարդը՝

վոր պալատներ ե կառուցում.

ա՛յ, աստծով մարդը՝

վոր զիմակով եր շրջում

իմ շրջմովիկիս փողոցում:

Բոլորիս! —

ձեր բլուր թալանչի —

յես քաջաբար գիտեմ՝

— լավ եմ ճանաչում!...

*
* *

Ինչպես ճարպիկ —

ձեր ազգե-ազգ սերունդներից՝

ավել եք միայն

աստծուն Նաիրուս — փեղքե՛լ —

վոր ինչքան ել ծծեք

նրանց անդամներից,

կրոնական ուսուցիչ

խմած

գիմանան՝
ինչպես անլեզու կենդանի,
— Եշ!...

Ե՛հ՛հ՛յ!
վամպիր!
զաղխիա!
«պատենտով» ափերիստ ես յեղեի!...
Փազանի նման
արյուն ես ծծել
ինչպես կաթ —
արյունս իմ արևավառ.
սպասիր դե,
հիմա մազսւթ կը խմես —
կապիտալ!
բյավթառ!!!

✻

✻ ✻

Կը դանք!
Կը տերեհք
ԱՇԽԱՐ ՀԸ! —
Կը քցենք ենպես որի՝
Վոր
Դարերի յերկայնքով
սողաս! —
ու
Կառչես արխիվի մշուշին...
Կը վարենք
Վրաիդ անմշակ գետինը՝
կոշտացած դարերով —

կը վարեն բոլորը
ինչքան կան —
վոր ծաղկի
մոտիկ գալիք
աշխարհը —
Սոցյալիստական!...
Այսօր Փարիզում՝ վաժաշ —
յերազիւ մեջ
տեսնում ես
կին.
բիրժան, բարդակ:
Միլյոն չիկ, լսում ես —
— ԲՍՎՍՍՆ
Ե!
Յերազ ե մնացել քեզ միայն —
— ԱՂՈԹԻՐ,
կամ շոկոլադ կեր:
Ադոթի՛ր Հոռմի պապին —
բերում եմ քեզ մի ապտակ...
Ճակատագիր եմ բերում —
— կընկնես շրջմոլիկիս տեգից
Միլյոն չիկ!
վաղ ե դեռ —
— ադոթի՛ր, չոքի՛
Այս անգամ
ահագանդ ե՝
հրաման —
դիկտատորը
տվել ե քարհանքից —

— քո գլուխը տանելու յեմ՝
նրան!!...

*
* *

Տեսել եմ քեզ կապիտալ!—

— հողի յես դնել

դու.

տեսել եմ շատերին

անհողի —

այսինքն՝

անսնունդ,

հիվանդ թափառող

մարդու...

Տեսել եմ ինչպես

կռվի են իջել,—

այնպես

անհողի,

այնպես խելագար:

Այդ դու՛ր յես

դյուրեթե —

քո հոգուց զիվական.

հյուսիս ես

նրանց սրտին

սով դեռ—

ու աչքերից լույսը

նրանց,

մշուշում ջնջել—

վոր մեռնեն

անլույս

դարեդար,—

ու

դու մնաս լավը —

թեթեղ!...

Տեսել եմ—

յերբ շրջմուխիկ էյի.

յերեկ ել դեռ՝

քո շիրմայած քաղաքում,

տեսել եմ պալատից

պատի տակ—

ինչպես մեռել են անհողի,

անտեր!...

Ու դու թքել ես վրան—

թաղել թաքուն,

վոտիտ տակ.—

բուրժույ-կապիտալ՝

— վոտիդ տակ!

Նայիրին, իմ յերկիրը,

ուր յեկել ապրել եմ յես իրանից. —

վորքան իրան ու Նայիրի

տեսա—

այնքան ել գուցե չը գիտեմ:

Դու նստած

մեծ փողոցից-փողոց—

ուր վոր ուժերդ

կը պատեն,

ուտում եյիր—

կլանում անտես:

Բայց—

տեսն

պալատիտ մեջ

քեզ

կապիտալ—

— խնճույքներում մեկ ե՛լ:

Իմացիր!—

ՇԱԻ.ԲՈՆԸ քիչ ե.

հարկավոր ե քեզ լավ

հայհոյե՛լ:

հարկավոր ե լինել

ԿԱՐՄԻՐ

ՍԵՐՎԱՆԹԵՍ

խայտառակ դեմքիդ՝

վերջին

քացի տալ!...

10.

Սիրում ես

աջնապես կամաց շոյե՛լ:

խաղալ. —

կապել գործարանիդ յերախին

ՄԱՐԴԸ!—

վորին ասում են՝ պրոլետար...

Սիրում ես,

յերբ մուրճերի առաջ—

ու

ստորերկրյա զագերում—

յեղբայրս սկսում ե գողալ...

— Կորդ!

ամեն պահին,

հրաժեշտ ե տալիս նա

իր կնոջն

ու—

յերեսին!...

Շրջմուխի եմ—պոետ

կարմիր!

դիտեմ թե ինչ ես

դու!

Գիտեմ՝ անարե

թաղել ե շատերին

հանքում,

թաղել ես անշուք. —

Քամիր դարեւոր յերախդ՝

կապիտալ՝

— գամիր!!

11.

Հիմա սպասիր—

վոր զարկի ժամը

12-ը անարկու!

Սպասիր—

եյ

Լոնգոն, Բերլին

ու—

Փարիզ,

և դու

Պեքին—

վոր դառնաք

Նաիրյան Յերիան—

Բալչիկ լինեք

Ինչպես Բաքուն, —

կարմիր կամար

լինեք, — յերկրագնդով

անցնող բոլոր

ճանփեքին!...

* *

Գալարումիդ վարկյաններում
քո՝

Յեվրոպան

կը լինի կարմիր ֆրոնտ!:

Վարկյանների թռիչքով --

մեկից,

միլյոններ

կարելի չե

զանեւ

Խորհրդային զրոշի ներքո—

յերբ տիեզերքն

ու յերկրագունդը,

կը համարվի

Սոցիալիստական՝ Բալչիկյան

горизонт!...

12.

Համաշխարհյան

պատմությանդ փուլումի

տասնյերկու ժամին, —

— Եյ վամպիր կապիտալ՝

Սուդանի,

Ռուրի

ու Նայիրի թալանչի —

զարկելու ե

զալպը! —

վոր տվել ենք կազմել

բարրիկադ! —

վոր մեռնող ալանջիդ

կանչի մահավճիռը քո

պատմական!...

Բարրիկադից —

բարրիկադ,

ըսպե առ

ըսպե —

կը շարժվեն

Սուդանցին եւ,

Ռուրն եւ,

կարմիր տոկով —

ու կբացեն հրաբուխը

վորպես

Պոմպե!

Պոմ —

Պե!!!

#

Գիտեմ պատմութիւնը.
Քաղաքը՝
հայրենիքդ քո

լորդ!

Ու յիս, քո շիրմայած
յերեկվա քաղաքում,
յեղբորս հետ

աշխատակից՝—

— բոլշևիկ

— պատպուղ!...

Իսկ դու,
այսօր շրջմոլիկիս

կարմիր քաղաքում,

ծաղկատար

չոփուր մի

զորա—

խաղալիք,

— ֆութբոլ!

* *

Յես լսով գիտեմ

ինչ էք դրել

ձեր աչքերում. —

— վրեժ,

և խանդ —

Մուսոլինին

ու

Հինգենբուրգ!

Ձեր արյունքամ

դործիքների պառավ սպեց,

ձեր թաքունի խոսքը հպարտ —

— այսօր կատակ,

— ու մաքից զուրկ!...

Լավ իմացեք!

ամեն բերլին՝

— բանվորական ուղմի բանակ. —

մի բարրիկադ

կրծքին սեղմեց՝

— վոր վաղը գա՛!

— վոր վաղը գան՛!...

* *

Ուզում եմ քո դեմքին —

վոնց վոր թեթև

մի ցող,

ցանկել բոլշևիկեան հինան.

ուզում եմ խեղդել քեզ

կարմրում. —

ու—

աշխարհդ՝ պոռնկավեպ խաղացող, —

ուզում եմ

ամբոխներին սրտով,

դնել զիկատառուրան

մեր!

Հիմի —

լսել են ամենքը.

հիմի գիտեն քեզ կապիտալ!

հարկավոր ե ազատվել —

— հասկացիր!

ընդունիր մեր զայրույթը՝

բավական ե հենց

մի գդալ!...

Սակայն —

երեկ առանձ ինձ ել խմեցիր.

անշուշտ՝

կը —

մեռնես!...

Յերեկ —

քո ձեռքիդ մեջ մեռավ

իմ նայիրյան մի ռաբոչի.

յերեկ խմել ես թույնը.

խփիր

աչքերդ դու —

Մուսուլինի,

կամ Հինդենբուրգ

կանչի՝

թերևս

ոգնեն քեզ վաժպիր —

իրեկ մարդու!...

13.

Կապիտալ!

քեզ ճանաչում եմ.

ուզում եմ

չը լինես.

չը լինես.

Ինձ մոտ չը կաս

չիք ես. —

ուզում եմ Լոնդոնում

եկ,

Բերլինում՝

չերեաս!

Ուզում եմ

Վաշինգտոնի

հանքափոր, Լինչը,

բարեի! —

բարեւ ե յես,

ասեմ. —

յեղբայր,

վողջունում եմ —

ԲՈՂՇԵՎԻԿ ԵՍ!!!

14.

ՎԵՐՋԱԽՈՍԲ

Ու վերջին յերկտողում

պոեմիս —

ըջմուրիկս՝ ուսած

հինորյա զայրույթը իմ, —

պիտի ձգեմ

վորպես հրձիգ. —

կայրեմ նրան —

վոր համաշխարհյան
Հոկտեմբերը լինի! —

դա
ամիս ու

ամիս. —

վոր խնդան զառանցումի ժամին,
ցարը —

պապը ցինիկ,
Հին-դեն-բուր-գները
Բեր —
լինի.

խնդան,
յերբ կարմրի արաբը
արևելքի —
— սևամորթ Ելշամին...
Յեվ յերբ կը գամ —
յես կը բերեմ կարմիր ուղեղ —
նրա հետ շարժուն մի մարմին
կը բերեմ —
— համաշխարհյան մի
հեղեղ!...

Ու —

ամենքը կը լսեն,
կը գան

հինգ մասերից աշխարի՝
կարմիր Լենիններ. —
— արևելյան մի
Բրամին —


այսինքն,

կամ Սուեն-Յաթ-Սեն,
կամ նախիրցի
կարմիր ասպետը,
— Շահումյան. —

ու յես,

շրջմովիկս թափառող,
կարմիր քաղաքների
պոետս՝ —
— Տիտանի՝ նման!!!

Լենինական 1924 թ. դեկտեմբեր:



10
für den 1. April 1891
für den 1. April 1891
für den 1. April 1891
für den 1. April 1891

für den 1. April 1891
für den 1. April 1891
für den 1. April 1891
für den 1. April 1891

für den 1. April 1891
für den 1. April 1891
für den 1. April 1891
für den 1. April 1891

für den 1. April 1891
für den 1. April 1891
für den 1. April 1891
für den 1. April 1891

für den 1. April 1891
für den 1. April 1891
für den 1. April 1891
für den 1. April 1891



ԳԻՆՆ Ե 40 ԿՈՊ.

ԼՈՒՅՍ ՑԵՍԱՆ ՅԵՎ.

— ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ —

1. ԳԻՆԱՄՈՒ ՆՎԱԳ.
2. ՆԱԻՐԻ ԲՈՒՋԱ.
3. ԿԱՐՄԻՐ ԲԱՂԱՔԻ ՇՐՋՐՈՒԻԿԸ.
4. ԿՈՎԿԱՍ.

ՀԵՂՈՐԵՎԻ ՀԸՍՑՆՆ՝

Тифлис: Карданахский пер. № 11.

ШАИ-БОНУ

2043

14952

